



218. ԱՂՔԱՏՆ ՈՒ ՀԱՐՈՒՍՁԸ

Մըն քչամսիր մարթ ա ինձնմ, տանը հաց լի ինձնմ, քյուննոմ ա վեր օրիշ տեղ հունձ անի, պիրի խոխորցը հաց հըսցնի: Հունց ա պըտահում, տանը էտ կնեգլը շատ ա եղում, վեր մարթը յտացալ ա, պերում տանը մըն կյանշ ցորեն ա ինձնմ, տամ ա խոփին, ածում պարկին մելը.—Ա՛ բալա, եր կալ տար ճըղացումը ճըղբա-պանին խնթրի, աղի, գոնյա պիրենք խոխերքը պահենք, քու հեր յըտացալ ա:

Էտ խոխան եր ա կենում, վեր ցորենը եր ա օնում քյուննում ճաղացը, քյուննում տեսնում, վեր դանը էն ա եր ա ածած, աղում ա: Հիշքան խնթրում ա էտ ճըղբապանին, մին էլ էտ դանի տիրաւշը, հնար լի ինձնմ ըղալի համար, ըսկուսոյ մարթ ա ինձնմ էտ դի-նատերը, էտ հարուստը: Վերը էն ա տհնաւ կյալիս, վեր պայմա-նավորվում են, վեր էտ հարուստին դանը եր կլա, էտ քյիսիրինը յիրա ածեն: Վերը, շատ անցնելուց հետո, վեր էտ ճըղբապանին տանան խարար ա կյանմ, վեր ճըղբապանին կանչում են, մնաւ են ճըղացումը էտ խոխան նան մին էլ էտ հիլիվերը, էտ հարուստ մարթը:

Ուրանդյանը վեր մթնում ա, էտ հարուստը էտ խոխին ասում ա:—Տու քյինա ճախա-մախա հըվաքի, պեր կրակ անենք, մթնալ ա, թռու էլ ա կյալու, համ էլ էշին էշնկը փոխի:

Էտ խոխան քյուննում ա, կագարում ա, կյամ ա տեսնում ա

Հիլիվերին դանը եր ա եկալ, էտ հարուստին, ինքյն էլ հերան դանը պիտի աղա: Աղում են, վերլացնում, վեր մթնում ա, հնարավոր չի ինում տոն կյալի, թոռն էլ նի կալած, էտ հարուստը էտ բյուրին խոփսեն ասում ա.—Պեր էտ հըրկըշավի պան անենք էլի իրուր, պաղարն թխներ ճրդացումը, բա սոված մնալու չենք:

Պայմանավորվում հն հետևյալ կարք՝ վեր ուրեմը խմորը ինձանա, փուշին քըզանա (էտ հարուստն ա էտ խոփսին ասում), Ասում ա.—Դե հինչ եմ ասում:

Խոփան էլ դե իմբռն միամիտ երեխա յա ինում, ինքյն էլ մըն տասսը-տասսներկու տըրեկան խոփսա յա, էտ խոփսան քյունում ա մին վեցրա ճուր ա պիրում, էտ հարուստը էլ հերան ալրան մին էրկու կյիսկ քցում ա տաշտին մեշը, լիճա շուշ ա անում, ասում ա.—Դե փուշեն քըզանա յա, պեր էտ խոփսին պարկումը հիշքան ալեր ա ինում, պիրում են թամուլզ պարան տամ տաշտին մեշը, վերը էն ա տուա կյալիս, վեր պարկումը մըն հափուռ ալեր չի մնամ:

Խոփան մնամ ա դե մըտքիլիս իլի, վեր տոն ա քյինալու տնօրտանկու Պաղարնը թխում են, տառնում ա տըսներկու հատ, ճըդացին պատին տակին էլ գիրչ-դիթյ շարում են, ուզաղին կոփսկին, էս հարուստը տեսնում ա, վեր պըզարճան մինը տա, ինքյը ըսկուպոյ մարթ ա ինում իլի, ինքյը ահապին վնասի տակ ա ինդյում իլի թա ներան միշումը:

Ասում ա.—Եթ, ամաքը մին սոտ ասինք, հուր սոտ լավ ինի՝ պաղարճնին լոխ ուրան: Սղում ա զրկի էտ խեղճ քյիսիրին խուխեն: Ասում ա.—Դե հինչ եմ ասում:

Մհեկ պատում ա էտ հարուստը, ասում ա.—Մին տարե իմ ապեր օխաց ճոխտ բըրդանու կորինձ էր պերալ, տրանք քյուռեն զրադին վըրեցինք, էտ քյուռիտ զրադին էնքան հաջող տարի իլավ, վեր քյուռը էտ բըրդանան տիրելը անց կըցըրեց կյետին էն դոլը: Էնքան բըրդանի փըռնեց, վեր ժուլովուրթը հըվըրեցին, էլ ասիլ շեմ կարող, էնքան կըրեցին, կըրեցին, տոն կար, հազար հատ պերավ, հալա էն դոլին էլ ծեռք լըռվեցին, էլ էն արունան մինչկ մհեկ էն բըրդանու հետքը հալա մեր տանը իրնում ա:

Նորաթը հըսավ խոփսին: Խոփան դե տեսալ ա, վեր էտ սոտին կոփսկումը հինչ ասի, վեր պըզարճան զրկվի վեշ, ասում ա.—Դե, լավ, ես ասեմ:—Ես,—ասում ա, բայց, երեխան, պետք ա ասեմ, վեր հալա եռուրթ դասարանում ա սուվուրիլիս ինում, դե վեր սոտ

ա, ինքին էլ ա օգում ասեմ Ասում ա.—Վեր ես տըսներկու տըրեկան ի, տեխնիկումի չորրորթ կուրսումն ի: Մի տարի իմ ապեր մեռավ... հիշտեղ ա՞ ապերը մեռալ, ախեր սոտը մերդանավ պիտի ասիմ: Էտ խոխան պատմում ա հետևյալը.—Վեր իմ ապեր մեռալ ա, մեր պարիկամները, վերը կյինի-արադ ին պերալ, վերը մըես, վրերը հաց, մեր պարիկամներից մինն էլ մին հափուռ կորեկ էր պերալ, լավ ե՞ս լսոնմ,—ասում ա էն հարուստին: Ասում ա.—Հա՛, լափ լավ եմ լսում: Էտ,—ասում ա,—կորեկը իմ մեր մին երկուիրեք տարե պահեց, հումց պըտահեց, մեր տռանը մին թթի ծառ կար, էտ թթի ծառին տակին վըրեցինք, ասում ա, մըն բանի տարի, ասում ա, դժնոնմը իրեք-շորս չընմալ հնձնում ինք, լըսնում, տանավ էլ ապրում ինքու ծո վեր քյացի տըսնիրեք տարեկանումը ինստուտի երրորթ կուրսը, էտ տարիս եկալ ի, վեր տանավը զիրավ հընցընեմ: Եկի, տեսնամ, վեր էտ կորեկըտ խելավ փըսալ ար, իմ մեր էլ տրան շորս դոլը նհենց լավ թենալ էր շինալ, սարբալ, կարբալ, վեր կորեկին շտփեր, ըսեցինք, վեր ըստարի տեղը թաթար չի ինպյնիլ էտ մըն հափուռ կորեկին: Մենք մըն խոզ ունինքյ, էտ անդեր խողըտ եկը, հումց պըտահեց, մենք տռանը դրուց ընելիս ժամանակը, էտ կորեկըտ քոռ ըրավ: Սըն պահ ես եր կալա, մընն էլ իմ ախաբեր, տուր թե կըտաս էտ խոզին: Վեր տռավինք, խոզը թըրքեց: Վեր թըրքեց, տեսնամ միշան մըն սիպտակ թոխտ տռիմ եկը: Էտ թոխտըտ տռնա կալա կըրթացի:

Մհեկ էտ հարուստըտ ասում ա.—Հի՞նչ էր կյիրած:

Թա ասում ա.—Հինչ լավ կյիրած էր, վեր, դոնդ ա, մին հափուռ ալերը հիլիվերինն ա իլալ, բայց լոխ փուշին քոմն ա իլալ, հիլիվերը դալաթ ա անում, էտ տըսներկու պաղարճը քոմն ա:

Էլ հիլիվերը կարում չի ասի, վեր սոտ ես ասում: Էտ խոխան պաղարճն ածում ա պարկին մեշը, շիլակում, քյունոնմ տռն:

